

մանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս Եկեղեցի փարկանիցիս և ոչ պարզեա առաւել կենաց և անկալութիւնս աստուածային և Հոգւոյն Սրբոյ յայանեալ լուսանորոգ նախադրութիւնս . . . և կամաց Լրարողին խնկաւորեալ խորհրդարանս և առաքելոյ ձեռինն աջոյ բարեհանձար Հիմնարկութիւնս միանդամայն առեւ՝ դուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանոյս և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց և ճշդրիտ տեսակ կերպի երեւակիս բանականիս իմանալին՝ խորհուրդ Հոգւոյս և շօշափելին պատկեր մարմնոյս . . . զայնպիսի ոչ խոստովանողան մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենախալ ի ձեռն Բանին իւրոյ էակցիս բարձեալ ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի. փակեացէ զդուռն կենացս այս առաքատի յանդիման նորին ։

(Հարունակելի)

Լ. ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆՆ՝

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԶԳՋԱՅՈՂ ԱՌԱՋԱԿՐ.

Մի ոմն ի կանխեղ շարագործացն հայհոյէր զնա եւ ասէր. ո՛չ դու ես քրիստոնէ փոնեա զանմն քո եւ զմեզ. Գառասխանի ետ ընկերն սաստեղով նմա եւ ասէ. չեքնալիս դու յԱստուծոյ զի ի նմին պատմի կաս. եւ մեք յիրաւի. զի արժանի որոց գործեացն ամբարն գնատուցումս. եւ սա սպիրիտս ինչ ոչ գործեաց. եւ ասէ ցժխտուս. յիշում զես, Տէր, յորժամ զայցես արքայութեամբ քով. եւ ասէ ցնա Յիսուս, ամէն ամէն ասեմ քեզ այսօր քնդիս իցես ի զոսիտին ։ Գր. Կ. Խ. 39-43 ։



զբարքս կրկին հաաաւ այն մեծ օրնս երբ բնդհանրական եկեղեցին սամբոջ աշխարհումս երկրպագումէ խաչեցեալ Արդւոյն Աստուծոյ. Այս խաչն որ պէտք է Յիսուսի Քրիստոսի գործն ոչնչացներ

1. Ս. Գ. Նարեկ. քնդդէմ Թոմարտե

Նրան ամօթով ծածկելով. այս խաչն որ այս օր էր ինչպէս Պօղոս առաքելոյ օրերումս ամանց համար զայժմակութիւն է և անմաւութիւն. այս խաչն որին աւելի ուժգին շարժում են քրիստոնէից յանցանքները քան նոցա թշնամիների յարձակումները. այս խաչը դեռ կանգնած է և ամեն օր բարձրանում է նորանոր երկիրներում որոնք ենթարկուում են Յիսուս Քրիստոսին. Սա դեռ կանգնած է, որ աւետէ աշխարհին սէր և Աստուծոյ սրբութիւնն և քարոզէ մեղաւորներին թողութիւն և ողորմութիւն. Սա դեռ կանգնած է և չը նայելով խաբուսիկ արտաքին երեւոյթին՝ երբեք զուցէ իրան չէր ենթարկած այնքան զղջացող սրտեր և այնպէս խորը թափանցած չէր քրիստոնէից հաւատան ինչպէս ներկայումս :

Եւ մենք, նրան շրջապատողներս որպիսի զղացմամբ նայում ենք նրան, յիշում ենք արդեօք որ զո՛հը զո՛հ է պահանջում և որ մեր մեղաւոր բնութիւնը պէտք է խաչուի Քրիստոսի հետ. Ո՛հ, քանի քանի քրիստոնէալքս այսօր որնուում ենք միայն մի տեսարան որ ապշեցնէր նոցա երեւակայութիւնն առանց նոցա սրտերը շարժելու. Յիսուսի քրիստոսի շարժաբանաց դորժած տպաւորութեանց մէջ կայ չղիաւեմ որպիսի մի զազանիք քաղցրութեան որ զրաւիչ է և մեղմիւ. Մարգարէ զրգոված է, բայց այդ զղացմունքը զղջումն չէ. այդ արտասուքները հեռեանք չեն խոնարհութեան. Հոգիք որոնք աւելի աշխարհային են շատ ընդունակ են հոգւոյ այդպիսի ալեկոծութեանց. Այդ լուսեական արտասուքով լի աշքերը պակաս չեն վառուել և՛ այն ամենի համար որ շոշոյում է նոցա յանցաւոր սովորութիւնքը, այդ շրթունքների վերայ որոնք յաւարարում են Պրկչի սերը, տեղ կգանէ և ամեն թեթեւամիտ խօսք, այդ սրտերը պակաս անձնատուր չեն և՛ ունայնութեան. Եւ ո՞վ զիտէ, ո՛հ Աստուած, արդեօք հէնց այսանդ հէնց այս ժամին երբ մենք խորհրդածել ենք կամենում Քրիստոսի շարժաբանաց վերայ առաջին տեղն աշխարհիս ունայնութիւնը չէ՞ բռնում. Ո՞վ զիտէ, արդեօք այդ ունայնու-

թիւնը ցրուած մտքերով չէ՛ եկած այստեղ Քո ձայնդ լսելու: Յիշեցրու ուրեմն մեզ, որ կարելի է զուարճանալ ամենասուրբ զգացումներով և այդ զուարճութեան մէջ էլ կորցնել հոգին: Յիշեցրու մեզ, որ մեր մէջ այսօր ալեկոծուելու բանը մեր խիղճն է և որ մեր ամենալուստաւոր ստատիստն այն սիրոյն, որ իրան զոհ բերեց, է—Քեզ նուիրելը ընդ միշտ մեր սիրան ու կեանքը:

Գողգոթայի վերայ երեք հոգիք էին խաչուած՝ մէկը Նա, որ փրկութիւն է տալիս: միւսն՝ որ ստացաւ փրկութիւն, երրորդը նա, որ արհամարհեց այն: Մէջ տեղում—չնորհաց բաշխողը մի կողմում՝ չնորհք ընդունող աւագակը միւս կողմում՝ նրան մերժողը: Ես կամենում եմ՝ այսօր խորհրդածել այդ մեծ տեսարանի վերայ և ուսումնասիրել յանցաւորներից առաջին օրինակն, որին դարձի բերեց Քրիստոսի խաչը:

Երկու աւագակներ չարչարուում էին Քրիստոսի հետ՝ Ս. Մարկոսն և Ս. Մատթէոսն առնում են, որ սկզբում նոքա երկուսն էլ միացան անբոխի հետ: Նրան նախատելու համար: Այն ամեն կողմից նախատինք է թափուում: Քրիստոսին առելու մէջ միացան ամենամեծ թշնամիք՝ Հերովդէս և Պիղատոս: Սաղուկեցիք ու Փարիսեցիք, ծերք և ժողովուրդ, Հռոմայեցիք ու Հրէայք և կարծես այս էլ բաւական էր, զոհերը միացան իրանց դահլիճների հետ: Արդեօք դուք ձեզ հարց տուել էք, ուստի՞ է այդ ընդհանուր զրգիւր և որպիսի՞ զարհուրելի բնագոյում միացրեց նրանց Քրիստոսին նախատելու համար: Այս ամենն այն պատճառով է, որ Քրիստոսի մէջ մեր առաջը կանգնեց սրբութիւնն, որ մեր բնութիւնը մերկանդամ արեց և յայտնագործեց անարգարութեան այն զօրութիւնը, որոնք նիրհում են մարդկային հոգւոյ խորքում ևս ասում եմ՝ մարդկային հոգւոյ խորքում և ոչ մարդոց այս կամ այն դասակարգի մէջ, որովհետեւ նոքա ամենքն էլ մի են: Մօտերումս մի ճարտարարան Ռարայէլացի դժգոհութիւն յայտնեց, որ Քրիստոսի խաչելութեան յանցանքը միայն մի ցեղի

(ազգի) վերայ են դնում: Եղբայր, նա արդար է, այստեղ մենք ամենքս էլ համաձայն ենք, կրքերն, որոնք կանգնեցին խաչը, յատուկ են ամեն ժամանակներին ու երկիրներին: Ամեն անգամ երբ սրբութիւնը յայտնուում է աշխարհումս, նա շարժում է իւր դէմ անդիմադրելի բարկութիւն: Որքան էլ նրան ձեզ քաղցր և զրաւիչ ներկայացնեք, էլի նա աղատ չի մնալ ատելութիւնից: Այս հասկանալը դժուար չէ: Լոյսից աւելի մաքուր ու բարերար բան չկայ, որպիսի ուրախութիւն է նա պատճառում նրան, ով տեսնում է նորա ծագումն խաւարից: Եւ որ սարսափով պատում է բանտարկեալն երկարատեւ զիշերուան մէջ բանտում: Ընչպէս զուարճացնում է նա բանտարկեալին, որ զրկուած է երկար ժամանակ նորա ճառագայթներից: Բայց երբ այդ լուսոյ ճառագայթներն ընկնում են ցաւազար աչքի վերայ, շլացնում են նրան, նրան զրդուում և անտանկի տանջանք պատճառում: Եւ նա կը փախչի լոյսից և դէպի խաւարը կղաճայ: Մոյնը պատահում է և՛ բարոյական աշխարհում: Մեր հոգւոյ աչքը ցաւազար է, սրբութեան պատկերը կուրացնում է նրան: Որքան նա աւելի լուսաւոր է, այնքան աւելի է նորա արած զրգիւր: Ենթադրեցէք այժմ, որ սրբութեան այդ պատկերն, որ ցայժմ յայտնուում էր իբրեւ թուփ, արշալոյս, յանկարծ մարմնանում է մի էակի մէջ, որ նրան ցոյց է տալիս իւր բոլոր քայլով, ենթադրեցէ՛ք, որ այդպիսի էակը յայտնուում է այնպիսի աշխարհում, որպիսին մերն է՝ ի՞նչ էք կարծում, նա ընդունելութիւն կգանէ: Ես չեմ տատանուիլ ասելու, որ զաղանիս բայց եռանդուն և միշտ աճող ատելութիւնը շուտով կշարժի ամեն հոգւոյ մէջ, որին շրջել է նորա լոյսը և որ այժմս էլ ինչպէս տասն և ութ դար առաջ կամաւոր կոյրերը Հրէաների պէս կաղապակն դատաւորի առաջ. «բարձ զդոս բարձ ի մէնջ»:

Մենք միշտ համարձակ եղել ենք քար զցելու Հրէաների վերայ և Գողգոթայի ամօթալի տեսարանի համար պատասխանատուութիւն

նը նոցա մարդանգութեան վերադրելու: Բայց անձնատար չլինենք: Կրքերն որոնք խռովում էին Հրեից ազգին խեղապէս յատուկ են ամեն մարդկային սրտի: Պութ: Հեռուում դարմանալով կանգնած էք Քրիստոսի առաջ և հարցնում էք: Թէ ինչպէս կարող էին Սրան առել: Բայց ի՞նչ կլինէր: Եթէ Քրիստոս յայտնուէր ձեր առաջ և Սորա մաքուր լոյսը լուսաւորէր ձեր հոգւոյ ամենածածուկ շարժումները: Պութ: Կգուած մարդկային փառքից: Կարծում էք թէ առանց դժգոհութեան կրէիք: Եթէ ձեզ յայնչէին որ ձեր կրքը ձեզ անարժան է անում: Աստուծակ բղնող փառաց: Պութ: որոնք բոլոր հաւատը արտաքին բարեպաշտութեան էք վերածել ու թեթեւամիտ և յանցաւոր կեանք էք վարում: Ի՞նչ կանէիք: Եթէ ձեզ բռնալ զերեզման անուանէին: Պութ: պատուաւորութեանց մարդկիրդ: որոնք միայն ձեր վիճակը բարձրացնելու վերայ էք հոգում: Կարող կլինէիք արդեօք անտարբերութեամբ լսել: Եթէ ձեզ յանդիմանէին ձեր կապալաշտութեան համար: Պութ: որ ձեր մաքում զուարճանում էք ձեր բնատուր աշխուժեամբ: Կարող կլինէիք արդեօք աանել: Եթէ Աստուծային աջը: Բարձրացրէիք: վարադոյր: Բանար ձեր առաջ բոլոր ձեր զաղանի թուրութիւնքը: բոլոր ձեր ծածուկ յանցաւոր սովորութիւնքն: առ հասարակ բոլոր ստորութիւնն: որ ծածկում է մարդու հոգւոյ մէջ: Եւ եթէ Սա հրաւիրէր ձեզ իրան հետեւելու: հրաժարուելով ամեն բանից և կրելու ձեզ վերայ խաչի ծանրութիւնը: Սորա առաջ: Կարծում էք արդեօք: որ այդպիսի հրամանից չէ՞ն ալեկոծուիլ ձեր բռնական յանցաւորութիւնն ու բարկութիւնը: Այո: Ինչ թուում է: Թէ արդէն լսում եմ մեր մարմնեղէն սրտերի բողբոջ այդ խիստ խօսքի գէտ: Ինչ թուում է: Թէ ես տեսնում եմ ինչպէս բոլոր կրքերն: որոնք զատապարտեցին Քրիստոսին: միացան և աղաղակ բարձրացրին: որ խղայնեն ու լռեցնեն Սորա ձայնը: Սեր հասարակութեան թէ բարձր շրջանում և թէ նորա ամենաստոր շերտերում էլ զրուխ կը

բարձրացնէին ամեն վատ բնադրումներն: որպէս զի այդ մերկացուցին ու յանդիմանողին հալածեն: Սերկայիս փարիսեցիութիւնն իւր ձեական հաւատով և ինքնագոհ սրբութեամբ իւր ձեռքը կմեկնէր սաղաքեցիութեան: այսինքն թեթեւամիտ սկեպտականութեան (երկբայութեան) և ծաղրող նիւթապաշտութեան: եսասէր հարստութիւնն և ճնշեալ ու վրդովուած աղքատութիւնը: զխտութիւնն իւր արհամարհանքով և տղիտութիւնն իւր մոլեռանդութեամբ: անյաղ աղահուժութիւնն: ամբարշտ շուայլութիւնը: ստոր կրքերը: մի խօսքով խաւարի բոլոր իշխանութիւնք կմիանային և մի աղաղակ կբարձրացնէին: « Ի խաչ հան » և ճշմարտութիւնն որին ոմանք աստում են: այլ թեթեւամտութեամբ չեն ճանաչում: կուենար ինչպէս լրտապղծում իւր անմիտ զատապարտողներն ու զահիճները: Սա կղանէր և իւր անարդար զատաւորներին: որ կլուանային իրանց ձեռքը նրան զատապարտելով: Այդ խաւար ամբարի մէջ ամեն ինչ բաւական կղանուէր: Հերովդէս և Պիղատոս կմիանային Սրան ջնջելու համար: մինչև անգամ յուզաներ կյայտնուէին Սրան մատնելու համար:

Յայտնի բան է: Եղբարք: սրանցից ոչ մէկը չի պատահիլ: Յիսուս Քրիստոս այլ ևս մեռնելու չէ: Բայց բաւական չէ՞ արդեօք մեզ համար իմանալն էր որ Սա կարող էր մեռնիլ: Ո՛չ: Քրիստոսի թշնամիք միայն Գողգոթայի վերայ չեն: Սրբա ամենուրեք են: ուր միայն կան սրտեր: որոնց կուրացնում է ճշմարտութիւնն և զրդւում սրբութիւնն: սրտեր: որոնք սիրով անձնատուր են լինում մեղքին: որովհետեւ այդ սրտերն: եթէ նոքա դուռէին Քրիստոսի առաջ և Սրանից զատապարտուէին: Սրան կատէին: ինչպէս հրէաները:

Եթէ այս ժողովի մէջ կայ մի մարդ: որ Աւետարանի առաջ ապրում է մեղքի մէջ խառնուած և խաւարը լոյսից զերազատում է: Թո՛ղ այդպիսին իմանայ: որ նա մեղսակից է Քրիստոսի խաղովներին: սրովհետեւ նա ինչպէս ասում է: առաքեալը: կրկին Քրիստոսին

ի խաչ է հանում և Մրան անարգանաց մատնում: Մըր ինձ կարգացրին Յիսուսի Քրիստոսի մահուան պատմութիւնը—ասաց մի ափրիկեցի նորագարձ հաւատացեալ—ես պախարակում եմ Հրեաներին և Պիղատոսին: բայց երբ ես նրանց հասկացայ, ես ինքս ինձ սկսայ պախարակել, որովհետեւ ես էլ Յիսուս Քրիստոսոսին ի խաչ էի հանում:

Այսպէս ամենքը նախատում էին Մրան: Բայց այս անմիաների ներդաշնակցութեան մէջ ամենից քիչ կարելի էր սղասել խաչեալ աւազակների ձայների մասնակցութեան: Մորա և՛ միացան անբոխի հետ: Սրանից նոքա ի՞նչ կարող են ակնկալել: Ամբոխի համար նոքա էլ արհամարհանաց առարկայ են: Մորա միացան նորա հետ Յիսուսի Քրիստոսի դէմ: Սա ի՞նչ չարիք էր հասցրել նրանց: Ի՞նչ է նշանակում այս խտատիրտ և ամօթալի անձնադուլութիւնը ի՞նչով բացատրելու է սա:

Այս բացատրութիւնը շատ էլ դժուար չէ: չարչարանքն էլ իւր փորձութիւնքն ունի: Որքան չարչարանքներն արժանապէս են ստացած, այնքան աւելի շուտ առաջ են բերում արտունջ, իսկ սրանից մինչև չարարանութիւնն մի քայլ է: Այդ մարդիկ զիտեն, որ իրանց վերջը մօտիկ է, և երկիրս նրանց այլևս ոչինչ չէ կարող տալ: Մոցա առաջ մահուան ապշանալի չարչարանքից աւել բան չկայ, և նոցա յուսահատութիւնը արտայայտում է նոցա անմիտ բարկութեան մէջ: Մորա չարարանում են Յիսուս Քրիստոսին հէնց այն պատճառով, որ Սա իրան Պրկիչ էր անուանում և այժմ չէ կարողանում: Ինքն իրան փրկել, խաչից իջնելով: Անմիաները չգիտեն, որ եթէ Սա մընում է խաչի վերայ, դա նոցա հոգիքը փրկելու համար է:

Ի՞նչպէս այստեղ ցաւօք սրտի չլիշէնք նրանց: որոնք վիշաք դարեցնում է: Վիշաք պէտք է առաջնորդէր առ Աստուած, վշաի մէջ մենք սովորում ենք զնահատել խաղաղութիւնն և մեզ իրանց: Սա թուլացնելով մեր ոյժերը՝ զգալ է տալիս մեզ մեր կատարեալ կախումն խոռվելով մեր կեղծ զուարճութիւնքը: վիշաք տա-

լիս է մեզ ճանաչել մեզքի բոլոր զառնութիւնը: Հէնց վշտով ծանրաբեռնեալներին է տալիս Աւետարանն իւր խոստումները: Ելի շատերը նրանցից չեն հասկանում Մրան ընդհակառակն որքան անդամ վիշաք վրդովել է մարդոց:

Պութ կարծում էիք, թէ բնականաբար Քրիստոսին պէտք է սիրեն աւելի նոքա որոնք աւելի կարօտ են միտիմարութեան: դութ կարծում էիք, թէ աւելի շուտ Քրիստոսին Պրկիչ կճանաչեն նոքա որոնք աւելի հեծում են թըշուառութեանց լծի ներքոյ—թէ աւելի եռանդով կը դիմեն դէպի իսկական հայրենիքը նոքա որոնք չկարողացան զանել իրանց համար տեղ այստեղ արեգակի ներքոյ, թէ նոքա աւելի կարօտում են Յաւիտենական խոստմանց, որոնց սրտերն այստեղ երկրիս վերայ աւելի խոցոտուած են: Քրիստոսի դէմ ապստամբող հոգիների դաւաճանութեան ժամանակ մեզ թուում էր, թէ զոնէ վշտացեալները Մրան հաւատարիմ կմանն, որովհետեւ ո՞վ Մրանից աւելի համակրութեան զանձ ունէր դէպի նոքա ո՞վ բացի Մրանից ուղղած էր յաւիտենական կեանքի խօսքեր դէպի նոքա բացի Մրանից ո՞վ իւր վերայ կրեց նոցա ծանրութիւնը: Բայց և այնպէս դութ յաճախ կը տեսնէք, որ վիշաք վրդովուում է և չարարանում: դութ կտեսնէք տանջուած սրտեր, որոնք ծաղրում են Աւետարանն և Մրա խոստումները և որոնք բոլոր մեր հրաւերներին պատասխանում են կծու երզիծարանութեամբ և ծաղրում են Աստուածային սիրոյ ամենաքնքոյշ խօսքերը: Թշուառները, մերժելով Յիսուս Քրիստոսին, նոքա ուր կերթան և ո՞վ նրանց կմիտարէ, եթէ նոքա արհամարհում են Աստուածային Միտիմարչի խօսքերը: Այս թշուառ են և անմիտ վասն զի եթէ կյայտանութի մի որ և է մարդարէ բացասութեան և կասէ նրանց թէ երկինքը—դա զաղարկ ձայն է, թէ աղօթքը—զուր աղաղակ, որին ոչ ոք պատասխան չի տալ, թէ ամեն ինչ դէպի ոչնչանալն է գնում: Թէ մարդու համար ամեն ինչ զերեզմանով վերջանում է—

ոչ, դուք կտեսնեք, թէ ինչպէս նոքա կվազեն դէպի նա ինչպէս նրան իրանց բարեկամ և փրկիչ կկոչեն, և զարհուրելի զուարճութիւն կզննեն մնայլ գիշերութեան մէջ, առանց օթափման, սա իսկական մեկնութիւն է մեր բնարանի խօսքերին, թէ երկու խաչուածներն էլ նախատումէին Նրան:

Բայց ով կարող է չափել շնորհաց գործողութիւնը, ով կհամարձակի յուսահատուիլ մարդու հոգի մասին: Երբ գողգոթայի վերայ լսումէր ծաղրի աղաղակը, աւաղակներէից մէկը յանկարծ լռեց և նորա հայեացքն ընկաւ Յիսուսի Քրիստոսի վերայ:

Նա տեսաւ Նորա երեսն որոյ վերայ հասումէր արիւն և նրան տեսանելի եղաւ Նորա բոլոր մեծութիւնը. Քրիստոսի հայեացքի մէջ նա տեսաւ անսահման սէր և ամբօխի աղաղակի միջով նա լսեց. «Հայր, թող գոցայի ոչ գիտեն, զինչ գործենն», խօսքերը: Այն ժամանակ այդ մարդու հոգւոյ խաւար խորքում սկսաւ զարմանալի յեղափոխութիւն կատարուիլ: Յանկարծ կարծես աստուածային լոյս լուսաւորեց նրան: Առաջին անգամ նա տեսաւ սրբութիւն, տեսաւ սէր: Անտեսանելի զգացմունքից շարժած, նա աւելի և աւելի խորր նայումէ և նորա հոգւոյ աչքերին առաւել և առաւել յայտնուում է յաշխարի աստուածային մեծութիւնը:

Բայց այս պարզուած ճշմարտութիւնը նա իւր մէջ ծածկուած պահել չէ կարող: Քրիստոս ոչ մի չարիք չէ գործել, այս պէտք է ասել յայտնապէս, ինչ փնաս որ ինքը խաչուած է—նա ուղում է խօսել: Եւ նա խօսում է: Մտածել էք արդեօք այս մասին: Քրիստոս երեք տարի ուսուցանում էր և այն ժամանակ նորա մասին խօսումէր ամբօխն ու ողջւնում նրան, իսկ Գողգոթայի վերայ միայն մի աւազակ գտնուեցաւ, որ խոստովանեց Նորա շնորհքն ու ողորմածութիւնը: Երբ վերայ ուշադրութիւն դարձրեցէք, ով երկչոտ քրիստոնեայք, որոց հաւատը տատանուում է Քրիստոսին ուրացող և անարգող ամբօխը տեսնելիս: Չեր հաւատի համար հար-

կաւոր է բազմութեան համակրութիւնը: Բայց յիշեցէք, որ այն բոլորին երբ խաչեալ ճշմարտութիւնը աշխարհիս անարգանաց ենթարկուեցաւ, նորա համար միայն մի վկայ գտնուեցաւ և այդ վկայն աւազակ էր:

Երբ նա՝ աւազակը զննում էր Քրիստոսին, նորա առաջ յայտնուեցաւ իւր բոլոր յանցաւորութիւնն: Մինչև ցայժմ նա խեղդում էր իւր խղճի յանդիմանութիւնն իւր մէջ, նա կամայ խստանում էր և անզգայանում, իսկ այժմ նորա առաջ յայտնուեցան իւր խղճալի զոյոթեան յանցանքներն և լոյսն ի վերուստ ցոյց տուեց նրան այն խաւարն, ուր խորասուզուել էր:

Ամեն ինչ ներող այս սիրոյ առաջ նորա եսասիրութիւնը, նորա անարդարութիւնը իրանց բոլոր սեռութեամբ յայտնագործուեցան: Եւ ահա նա ասում է. «Եւ մէք յիրաւի դիարժանի, որոց գործեցան՝ առնումք զհատուցումն»: Ահա եղբայրք, շարժուած սրտի խօսքեր, ոչ մի արդարանալու պատճառաբանութիւն, ոչ մի դատարկաբան խնդիր ներողութեան: Նա ինքն իրան տեսաւ և ծանաչեց իւր անձը: Այս բաւական էր, որ նորա մի բոլոր առաջ Քրիստոսին չարաբանող շքրութուններից լսուէին զղման խօսք և կոծ: Այս բաւական է, որ նա մեզ մշտական օրինակ դառնայ, որ ուսուցանում է մեզ անպայման խոստովանելու մեր յանցաւորութիւնն և նորա նման Փրկիչի ողորմութեան միայն ապուստինելու:

Ինչպէս, միթէ այսպիս փութով կասէ սկեպտիկեանն և անհաւատութեան ծաղրով կհանդիպի այս պատմութեան: Այո, աշխարհը չէ հաւատում այսպիսի յանկարծական փոփոխութեանց և ինչպէս կարող է նա հաւատալ, երբ ներկայումս ամեն ինչ բացատրում են բնութեան ներգործութեամբ, աւելի ճիշտն ասեմ—բնութեան ճակատագրով: Մեզ կզիջանն աւելի շուտով, եթէ խոստովանեցէք, թէ յեղափոխութիւնք և վերածնութիւնք լինում են տակաւ առ տակաւ և աստիճանաբար և զոցա սաղմը, ինչպէս ասում են, նա-

խորդ անհատի կեանքի մէջ է ծածկուած այս
կնշանակի, թէ կամենում են թէ մարդոց կեան-
քից և թէ աշխարհի կեանքից հեռացնել
աստուածային ներգործութիւնը: Բայց ինչպէս
որ մենք զիտութեան ճակատագրութեան դէմ
դնում ենք հաւատն առ Արարիչ Աստուածը,
նոյնպէս բարոյագիտութեան ճակատագրութեան
դէմ դնում ենք հաւատն առ Աստուած,
որ յանցաւորներին դարձի է բերում: Տարակոյս
չկայ, որ Աստուած իւր սովորական ճանա-
պարհներում գործ է դնում իւր գրած օ-
րէնքներն և աւելի յաճախ հոգիք դառնում
են առ Աստուած միմեանց հեռեւոք գործո-
ղութեանց շարքով փորձերի և հրաւերների
գորութեամբ: Ծնորհաց Աստուածը կարգի
Աստուած է և զարգացման օրէնքին հեռեւոք
դարձն, որ մենք բնական ենք կոչում ոչ պա-
կաս հաստատուն է լինում և հիմնաւոր:
Բայց երբ կամենում է, Աստուած գործում է
և՛ ամենակարողութեամբ և ժամանակը հոյա-
տակում է Մրան: Պուք չէք հաւատում յան-
կարծական դարձին, շնորհաց ներգործու-
թեանը. բայց ժամանակի որպիսի տարածու-
թիւն կվերադրէք Աստծուն: Ժամանակ. բայց
ի՞նչ է դա հարցնում եմ ես, հոգւոյ կեան-
քում: Մի՞թէ չեն լինում ժամեր, որոնք մարդ-
կային կեանքի տարիներին արժեն: Մի՞թէ չեն
լինում այնպիսի վճռական բոլորներ, երբ
կենդանանում են կեանքի և գործունէութեան
բոլոր ոյժերը, որոնք ուրք չէ կարող չափել:
Մի խօսքով մի՞թէ Աստուած կարօտ է ժա-
մանակի՝ իւր գործը կատարելու համար: Մի-
թէ Մա այն Ամենակարողը չէ, որ ասաց
«Եղիցի լոյս» և եղև լոյս: Ես հաւատում եմ
Աւետարանին, որ վկայում է Մորա յաղթող
շնորհաց բողբոսութիւն դէպքերին—զոքս են
բոլոր առաքեալներն, որոնք ամեն ինչ թողին
և Քրիստոսին հեռեւեցին—դա Ուելն է, որ
Մատթէոս դարձաւ, Սղոմոն որ Պողոս եղաւ,
Սիմոն, որ Կեփաս դարձաւ, դա աւագակն է,
որ այժմ դարձել է և զղջացել: Մոյնը կտա-
տահի և ձեզ հետ եթէ կցանկաք, զուք—
բնաւորութեան գերի էք, որ անփոփոխելի էք

համարում, զուք գերի էք սովորութեանց, ո-
րոնք ձեր բնութեան մէջ դրած էք համարում
զուք, որ կոչուած էք ազատ լինելու հաւա-
տով, զուք՝ մեղաւորներդ և տկարներդ, կարող
էք դառնալ հաստատամիտ և հզօր—զուք՝
հպարտներդ կարող էք դառնալ հեղ և խոնարհ:
«Բայց եթէ ինչ ի Քրիստոս Հօր արարած
լցի, զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն:
Այլ ամենայն ինչ յԱստուծոյ . . . (Եկր.
կորնթ. Ի. 17—18): Հաւատացէք ամեն ինչ
նորոգող և վերածնող Աստծուն, խաւարի ա-
մեն իշխանութեան դէմ դրէք Մորա ամենա-
կարողութիւնն և երբէք մի յուսահատուէք
ձեր հոգւոյ ապագայի մասին: Աստուծոյ շնոր-
հաց աղբիւրն անսպառ է: Ժաղրածուին Մա
կարող է դարձնել հաւատացեալ, և չարարա-
նոյին զղջման և դարձի օրինակ:

Եթէ ես զարմանում եմ աւագակնի զղջման
վերայ, իսկ աւելի զարմանալի է թուում նորա
հաւատը: Խաչեալ Քրիստոսի մէջ նա տես-
նում է իւր թագաւորին. բայց նա տեսել էր
Մորա զլիսին գրած ծաղրալի արձանագրու-
թիւնն, որ արել էր Պիղատոսը: «Թագաւոր
Հրէից»: Մա զիսէր, որ Քրիստոս իրան թա-
գաւոր էր անուանում և նա տեսնում էր այս
թագաւորութիւնն ու ողջունում է Մրան այն
ժամանակ, երբ ամենքը նրան ոչնչացրած էին
համարում: Մորա փշեայ պատկի ներքոյ նա
տեսաւ—Մորա փառաց փայլը, Մորա չարչա-
րանաց մէջ տեսաւ Մորա ամենակարողութիւ-
նը, Մորա ստորութեան մէջ—Մորա յաղթա-
նակը: Այն խաչն, որ վերջին դատապարտու-
թեան զործին էր, եղաւ նորա համար այն,
ինչ որ դարձաւ Մա, երբ նուաճեց բոլոր աշ-
խարհը. Քրիստոս միայնակ է, Մրան չարարա-
նում է ամբօրը, Մրան պախարակում են քա-
հանայք և զպիրք . . . Քրիստոս չէ կարողա-
նում գործել, Մորա ձեռները բեւեռած են խա-
չի վերայ: Մորա շրթունքները ցամաքել են
մահուան տաղնալից, Մա բնաւ իւրացելի թա-
գաւորի նման չէ, Մա կարծես Տէր Աստուած
չէ, և ահա երբ Մորա գործը ըստ երևոյթին
կորած էր թուում տեսաւ որ նա միայն սկզս-

ուժէ։ Ահա եղբայրք, ինչ է հաւատն իւր
բոլոր պարզութեամբ և մեծութեամբ։ Ահա
նա (հաւատը) առանց տեսանելի ապացոյցի
առանց պաշտպանութեան երկրիս վերայ։ Բայց
միևնոյն ժամանակ թափանցում է անսահմանը
բովանդակում է իւր մարդարեւական հայեաց-
քի մէջ ապագան և դարերին առաջում է նրանց
իւր ետեւը թողնելով։ Ամեն ինչ նորա դէմ
էր—ամբողջ ծերերի և դպիրների թշնամու-
թիւնը, աշակերտաց ցրուիլը, սարսափելի
մահաւան մօտաւորութիւնը։ Եւ այնու ամե-
նայնիւ նա հաւատաց։ Խաբուեցա՞ւ արդեօք
նա։ Ո՛հ, եթէ այդպիսի էր հաւատն աւագա-
կիւ որ միայն երկու ժամ տեսաւ և զննեց
Քրիստոսին, ամօթ չէ՞ արդեօք մեզ համար
եթէ մենք այլ ևս երկրայէնք։ Մա տեսաւ
Քրիստոսին միայն ստորութեան մէջ, իսկ դուք
տեսաք Մրան փառաց մէջ, նա տեսաւ անար-
գանքն, որով Մրան ծածկեցին մարդիկ, մենք
տեսանք Մորա յաղթանակը։ Մենք տեսանք,
որ այդ ամօթալի խաչը դարձաւ Աստու-
ծոյ զօրութիւն մարդոց փրկութեան հա-
մար, մենք տեսանք թէ ինչպէս հին աշխար-
հի գրկում, այս անբուժելի զեղխութեան
խորքում Մա կանգնեց նոր մարդկութիւն և
ինչպէս Մա յանդուգն ազատութեամբ ազգին
հրաւիրեց դէպի հաւատոյ և յուսոյ կեանքը։
Մենք տեսանք թէ քանի միլիոնաւոր մեղա-
ւորների նա պղծութիւնից դարձրեց առ Քրիս-
տոս յաւիտեանս, մենք տեսանք, թէ ինչպէս
այդ խաչը փոթորիկներից յետ, որոնք կարծես
նրան պիտի խորտակէին, երևում էր աւելի
մեծ փայլով և զօրութեամբ։ Այժմ մեր աչ-
քի առաջ Մա կանգնած է աշխարհիս ամէն
սահմաններում և խեղճ հեթանոսների հողի-
ններում բեղմնաւորում է դարձի, զղջման և
սրբութեան պառզներ, որոնք մեզ զուարճա-
ցնում են։ Մենք տեսանք թէ Մա որպիսի
խիստ վշտերի դէմ մաքառեց, որոնց համար
աշխարհումս միսթարութիւն չկայ և յաղ-
թում էր նրանց։ Մենք տեսանք, թէ ինչպէս
Մա վերջին բոպէին խաղաղութիւն էր պար-
զեւում այն սրտերին, որոնց համար, կարծես,

յուսահատութիւնն յաւիտեական մասն և
բաժին լինէր։ Մենք իրանքս էլ զգացել ենք
նորա յաղթական ոյժը։ Մի օր և մենք կանգ-
նեցանք այդ խաչի առաջ և այն օրուանից
Աստուծոյ սէրը յայանուեցաւ մեզ իւր բոլոր
մեծութեամբ և մենք հպատակեցինք Մրան և
յաղթուեցանք Մրանից և այնու ամենայնիւ
այդ բոլորից յետոյ էլ մենք զեռ ևս նայում
ենք ապագայի վերայ երկրայութեան տրամու-
թեամբ, մինչդեռ աւագակն ուղղակի դաւանում
է խաչակի տրքայութիւնը, մենք զեռ ևս
տատանմամբ և վրդովմամբ մաղթում ենք Մո-
րա զայուստը, ու թն և տաճն դարերի ընթաց-
քում ունեցած յաջողութիւնից ու յաղթու-
թիւնից յետոյ, զեռ ևս մենք դժուարու-
թեամբ հաւատում ենք, որ Մրան է պատկա-
նում յաղթութիւնը։

«Յիշեա՛ զիս» Տէր, յորժամ դայցես արքա-
յութեամբ քով։ Ահա հաւատոյ աղօթքը
բայց շնորհք խնդրող հաւատոյ, արքայու-
թիւնն, որին նա սպասում է, ողորմութեան
արքայութիւն է։ «Յիշեա՛ զիս»։ Մա առաջեւ
տեսնում է յաւիտեական դատաստանն, որով-
հետեւ մի քանի բոպէ ևս և ամեն ինչ նորա
համար վերջացած կլինի այս աշխարհումս։
«Յիշիր ինձ, երբ կկանգնեմ Արդար Դատա-
ւորի դատաստանի առաջ, միայնակ առանց
պաշտպանի։ Այս զարհուրելի բոպէին . . . յի-
շիր ինձ։ Որպիսի զօրութիւն կայ այդ աղօթ-
քի մէջ և որպիսի վերածնութիւն այդ մար-
դու մէջ։ Մի քանի վայրկեան առաջ նա ան-
հաւատ էր և չարարանող, իսկ այժմ լի հա-
ւատով և անօգնականութեան զգացմամբ։ Մո-
րա երկիւղից ու խղճի խայթից վրդոված հո-
գու մէջ թափանցեց սէրը, սէրն իւր անսահ-
ման հաւատով, որ արտայայտուում է այս «յի-
շիր ինձ, պարզ խօսքերով։

Ահա եղբայրք, շնորհաց զործը։ Ահա վե-
րածնութիւն, որ միայն Աստուած կարող է
կատարել։ Արդեօք զիտե՞ք զուք, սրանից աւե-
լի լաւ ու զեղեցիկ բան։ Դուք տեսած էք թէ
ինչպէս վերածնում է բնութիւնը դարնան դա-
լով, այնտեղ ուր ձմեռը փակ էր իւր մա-

Հարեր վերմակն այնտեղ, ուր տիրում էր անշարժութիւն, լուսութիւն և արտմութիւն, յանկարծ տեսնում էք դուք, որ երևում է շարժողութիւն, կեանք և ուրախութիւն, դուք տեսած էք, թէ ինչպէս փայլուն երկնքի ներքոյ երկիրը ծածկուում է կանաչի ալիքներով, որոց զոգում հողմից շարժուող ծաղիկները որոց զոյնի են տալիս, օդը անուշահոտութեամբ լցնելով, դուք տեսած էք, թէ ինչպէս երկրից, որ մեռած ու սառած էր թուում, նոր բուսականութեան զեղեցիկութիւնն է արտափայլում, դուք ողջունած էք կեանքի այդ զօրութիւնն, որ յաղթել էր մահուան: Բայց այդ հրաշքներն ոչինչ են համեմատութեամբ հողոյ վերածնութեան հետ, որ մահից դէպի կեանք է անցնում, հողոյ, որ կործ ժամանակ առաջ մեղքերով լի յանկարծ դառնում է դէպի սուրբ կեանք—որ դեռ կարճ ժամանակ առաջ բացի եսասիրական ձգտումներից ոչինչ չէր ծանաչում յանկարծ իրան Աստուծոյ սիրով ներշնչուած է զգում: Մրան լուսաւորում է նոր լոյս, նրան հաճելի է յաւիտենական յոյս, սիրոյ հուրը սրբում է նորա բոլոր զգացմունքները, կրքերի փոթորիկները խաղաղում են և աստուածային խաղաղութեամբ է նա լցուում: Նա՛ այդ հոգին վերջապէս ծանաչեց ճշմարիտ կեանքը, որ չէ կարող խորտակել մահը, որովհետեւ այդ կեանքի աղբիւրի ակը Աստուծոյ մէջ է: Եւ ի՞նչ է հարկաւոր այս գործը կատարելու համար, միայն հաւատոյ, զղման և խոնարհ յուսոյ հայեացք—աչք, հայեացք մեղաւորի, որ իրան զատապարտուած է համարում և ընկնում է յաւիտենական շնորհաց—զթութեան զիրկը: Յիշեա՛ զիս, Տէր:

Եւ Յիսուս ասաց նրան. «Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին»: Այսօր — որպէս փութով—ասում է Բոսֆուլէսը, ընդ իս — որպիսի հաղորդակցութիւն, ի դրախտին—որպիսի հանդիստ և անդորրութիւն: Եւ այս խօսքերն ուղղած են աւաղակին, յանցաւոր գոյութեան մեղքերից յետ նորա համար բացուում է դրախտը, սրբոց ընկերակցութիւնը և

հաղորդութիւնը Աստուծոյ հետ: Այժմ իսկ թողութեան հետ ստանում է երկինք, այսօր իսկ նա յաւիտենական Աստուծուն է պատկանում: Կհաւատայի՞նք արդեօք մենք, եղբարք, եթէ այդ խօսքերն Սուրբ ու Արդարն ասած չլինէր, եթէ նոքա արտասանած չլինէին խաչի բարձրութիւնից, ուր միացան խաղաղութիւն և արդարութիւնը և ուր Աստուծոյ սրբութիւնը յայտնուեցաւ իւր բոլոր անընկճելի մեծութեամբ: Բայց Աստուծն հաճելի էր, որ Որդւոյ Աստուծոյ խաչով փրկուած առաջին հոգին լինէր աւաղակի հոգի և դրանով աւետուի մեզ, որ փրկութիւնը շնորհք է: Աւաղակ, ո՛հ որպիսի միեմարական դաղափար է: Սորհրդած ենք այդ մասին, և նրանով ներշնչուինք:—Աստուծային արդարութեան առաջ, հարցնում է Պօղոս առաքեալն—ի՞նչ տարբերութիւն կայ քո և մի ուրիշի մէջ: Աստուած մեզ ամենքիս զատապարտած է, որպէս զի ամենքին պարգեւ է շնորհք: Յանցաւոր մեղաւորները կամ բարեգործ մեղաւորները, առաջին կամ մեղաւորները ժամի մշակները—ամենքն էլ մի ապաւէն, ապաստանարան ունին—դա Աստուծոյ զթութիւնն է և շնորհքը: Թո՛ղ խռովին դրանով փարիսեցու հպարտութիւնը: Այդ աւաղակի և մեր մէջ ո՛ւր է տարբերութիւնը: Պուք չէք կամենում նորա կեանքը զիտենալ, բայց և այնպէս ձերը զիտէք: Մտածեցէք այն բոլոր փորձութեանց մասին, որոնք չէիք ծանաչում այն խրատների ու շրջանի մասին, որոնք ձեզ շրջապատում էին, այն փրկութեան հոգսերի մասին, որոց առարկան էք եղած, այն հրաւերներին ու նախազգուշութիւնների մասին, որոնք ուղղած են եղած դէպի ձեզ: Մտածեցէք միանգամ այն մասին, թէ ի՞նչ կպատահէր ձեզ, եթէ մի օր, մի ժամ Աստուած ձեզ ձեր կամքին թողնէր, խորհեցէք այն բնական հակամիտութեանց վերայ, որոնց յայտնութեանց համար մի առիթն էլ բաւական է, որ գործէիք ամօթալի գործ, մտածեցէք ատելութեան և նախանձի այն զրգիւնների վերայ, որոց զոյութեան մասին ոչ ոք կասկած էլ չէր

տանում և որոնք չէին տանջում ձեր հոգին: Ո՛վ շիտակ մեղաւոր, զննիր կեանքդ Աստուծոյ սրբութեան լուսով: Կշտիր քո գործերդ ու մտածմունքներդ և էլի մի անգամ ասան եթէ կհամարձակես, այդ մեղաւորի առաջ, որին Աստուած պարգևեց շնորհք, ասան եթէ կհամարձակես, թէ՛ պիտի այդ մարդուց աւելի լաւ ես: Իսկ մենք բոս Փրկչին դարձող աւագակին կասենք, որ մեզ հարկաւոր է Մորա արդարացումն: Մորա կատարեալ թողութիւնը: Միայն Մորա մէջն է մեր խաղաղութիւնն ու յոյսը:

«Այսօր ընդ իս իցես ի գրախտին»: Եղբայր, Քրիստոս աւագակի առաջ դրախտը բաց արաւ բայց և այնպէս չազատեց նրան չարչարանքից ու մահից խաչի վերայ: Մա չէ թեթեւցնում նորա ներկայ չարչարանքները, չէ մեղմում նորա մահուան տագնապը:

Ընդունեցէք այս վերջին դասն ու խրատը, ով եղբայր, որոց Աստուած հրաւիրում է չարչարանաց համար: Զեր վշտերը յաճախ վրդովեւ են ձեր հոգին, յաճախ ծածկել են ձեզ նից Աստուծոյ բարութիւնը: Ի՞նչպէս կարող կլինէիք հաւատալ, թէ Մա ձեզ սիրում է, երբ Մա բոս երեւութի ձեզ ձեր բազմին էր թողած, երբ ոչ արտաքին թեթեւութիւն չէր վիպում Մորա նախախնամութեան, երբ դուք էլ այլոց նման պարտաւոր էիք Մորա տեսանելի խստութեան դառն բաժակը դադարկել: Աւագակը վրկուած է, բայց և այնպէս նա չարչարուում է: Մորա առաջ բաց է դրախտը, բայց նա էլի մնում է բևեռած խաչի վերայ: Մորա առաջ բաց է յաւիտենականութիւնը, բայց նորա մահուան պատիժը չարունակութեամ է: Այո՛, նա չարչարուում է, որովհետեւ Տէրը նրան չխոստացաւ երկրաւոր երջանկութիւն, չխոստացաւ ազատութիւն երկրաւոր տանջանքներից, նա չարչարուում է, կարծես թէ Աստուած չէր սիրում նրան: Բայց մտածում էք արդեօք, նա հօ իւր Փրկչի հետ միասին է չարչարուում...: Ո՛հ երջանիկ չարչարանք, ով կցանկանայ նրանցից հրաժարուելու: Մա չարչարուում է, բայց նորա մահատիւ պէտքերը

տեսնում են Մրան, ով իրան զոհ բերեց նորա փրկութեան համար: Մա գնում է թագաւորելու Մորա հետ միասին, մի թէ այդ շատ և շատ բաւական չէ Մորա հետ միասին չարչարուել ցանկանալու համար: Մի թէ դորա համար շատ բաւական չէ Մորա չարչարանաց վկայ լինելը, Մորա հետ միասին լինելը ընդհանուր նախատանքի, հայհոյանքի և Մորա միայնութեան միջոցին: Ահա եղբայր, ճշմարիտ քրիստոնէի չարչարանքները, ահա սա է բացատրում ձեզ այն ուրախութեան եռանդն ու ջերմ ազօթքներն, որոնք դուք տեսաք ծանր կեանքի և ամենադառն վշտերի ժամանակ: Այսօր Ինձ հետ խաչի վերայ, այսօր էլ Ինձ հետ դրախտում ու փառաց մէջ ես — բայց թէ խաչի վերայ և թէ փառքում, եղբայր, Մորա հետ լինե՛ք, միշտ Մորա հետ:

(ԲԵՐՍԻԷ)

ՊԱՏՄԱԿԱՆ

Խ Ճ Ո Ւ Ղ Ի

(Շարունակութիւն) *



ազդն անդայ երկրորդ արքունական նոր խճուղին է իրանայ ճանապարհն, որ Տրապիզոնից կարի՛ն կարնից Բասնի միջով կանցնի Տէլի — Բաքա գիւղի 1/2 ժամ հարաւից, կը մտնէ Գարա — Տերպէնտ (Սև — Կիրճ) կոչուած նեղ և երկու կողմից ժայռերով ու զահայեաց չափազանց բարձրացած սորտափ ազդող կիրճն, 1 3 1/2 ժամու չափ խոր կրճի մէջ ելնից իջնող ձորակի հետ բարձրանալով

*) Տէս նախընթաց համարը:

1. Այս կիրճն երկու խոր ձորակներու կը բաժանուի. երկու ձորակներն Գարաեղբայրների մօտ իրար կը միանան. ձախ կողմից իջնող ձորն Գըղլ Տէրպէնտ կասուի: